



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

### ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հասցե՝ Երևան, Զաքյան փող. 2

Հեռախոս՝ 010 600 701 #114

15.12.2016թ.

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Փաստաբան Գեորգի Մելիքյանի (արտոնագիր՝ 1798) նկատմամբ  
դատախազ Կ. Ներսիսյանի վարքագծի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), ընդլայնված կազմով, մասնակցությամբ Հանձնաժողովի համակարգող Կարեն Մեժլումյանի, Հանձնաժողովի անդամներ Արմինե Ֆանյանի, Գեղամ Հակոբյանի, Արսեն Մկրտչյանի, ներկայությամբ ՀՀ ՓՊ արագ արձագանքման հանձնախմբի համակարգող Գևորգ Մկրտչյանի, ինչպես նաև դիմող փաստաբան Գեորգի Մելիքյանի և փաստաբան Գայանե Լյուդվիկյանի, ուսումնասիրելով Գեորգի Մելիքյանի կողմից ներկայացված դիմումը, լսելով բացատրությունը, ինչպես նաև թիվ ԱՐԴ/0041/01/16 քրեական գործով դատական նիստի ձայնագրությունը, լսելով նաև փաստաբան Գայանե Լյուդվիկյանի կողմից հանձնաժողովին ներկայացված թիվ ԱՐԴ1/0016/01/16 քրեական գործով դատական նիստի ձայնագրությունը և լսելով Գայանե Լյուդվիկյանի բացատրությունը **պարզեց հետևյալը.**

Փաստաբան Գեորգի Մելիքյանը թիվ ԱՐԴ/0041/01/16 քրեական գործով հանդիսանում է ամբաստանյալ Ալիկ Սաֆարյանի պաշտպանը:

Գեորգի Մելիքյանի կողմից ներկայացված դատական նիստի ձայնային արձանագրության, [www.datalex.am](http://www.datalex.am) կայքի ուսումնասիրության և նրա բացատրության համաձայն թիվ ԱՐԴ/0041/01/16 դատական գործով փաստաբան Գեորգի Մելիքյանը հանդիսանում է ամբաստանյալ Ալիկ Սաֆարյանի պաշտպանը, իսկ մեղադրողն է ՀՀ Արմավիրի մարզի դատախազ Կ. Ներսիսյանը:

2016 թվականի դեկտեմբերի 13-ի նիստի ընթացքում պաշտպանի կողմից

վկայի հարցաքննության ժամանակ մեղադրողը ամեն կերպ փորձել է միջամտել և ապակողմնորոշել, ուղղորդել: Այդ կապակցությամբ Դիմողը առարկել է դատախազի անօրինական գործողությունների դեմ, որը ցավագին է ընդունել վերջինս և բորբոքվել ու վիրավորական արտահայտություններ հնչեցնելով իր հասցեին, հրահրել է լեզվակոծիվ՝ մոռանալով որ գտնվում է դատարանում, մոտեցել է իր սեղանին և փորձել է հարվածել, ինչը կանխել են կարգադրիչները, բռնելով դատախազին:

Երբ փաստաբան Գեորգի Մելիքյանը դիմելով դատարանին հայտարարել է, որ դատախազը ճնշում է գործադրում պաշտպանական կողմի վրա, դեռևս կարգադրիչների կողմից բռնված դատախազը Դիմողի առջև դրված լսափողը հրելով գցել է նրա վրա: Այնուհետև շարունակելով ագրեսիվ վարքագիծը դատախազը պաշտպանին դուրս է կանչել հարցեր պարզելու համար և այդ ընթացքում հնչեցրել է վիրավորական արտահայտություններ՝ «արա», «արա այ հավ»:

Դատախազը՝ չհանգստանալով, դատարանի ներկայությամբ կրկին շարունակել է դիմողին դուրս հրավիրել, իսկ վերջինիս մերժումները ստանալով վիրավորել է նրան:

Անգործություն դրսևորելով այդ ամենին չի միջամտել և դատախազի նկատմամբ սանկցիա չի կիրառել ու կարգի չի հրավիրել նախագահող դատավոր Ա. Ադամյանը: Ավելին առանց այդ մասին հայտարարելու դադարեցվել է դատական նիստի ձայնային արձանագրումը, ինչի վերաբերյալ Դիմողը հայտարարություն է արել:

Դատական նիստի ավարտից հետո դատախազը կրկին փորձել է Դիմողին վեճ հրահրել, ընդհուպ հայհոյանքներ հնչեցնելով:

Փաստաբան Գեորգի Մելիքյանը հայտնեց, որ դատախազ Կ. Ներսիսյանին պատասխանատվության ենթարկելու դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին:

Փաստաբան Գայանե Լյուդվիկյանը բացատրություն տալով հայտնել է, որ թիվ ԱՐԴ1/0016/01/16 քրեական գործով հանդիսանում է պաշտպան, իսկ մեղադրողը նույն դատախազ Կ. Ներսիսյանն է, որը համանման վարքագիծ է դրսևորել նաև այդ գործով, ինչպես իր, այնպես էլ դատարանի նկատմամբ, հաշվի չառնելով անգամ իրեն վիրավորելու համար դատարանի կիրառած սանկցիաները և շարունակելով վիրավորանքներն ու դատարանի կարգադրությունները չկատարելը: Հանձնաժողովը հետագոտեց նաև այդ գործով դատական նիստի ձայնային արձանագրման կրիչը:

Հանձնաժողովն արձանագրում է.

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. *«Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության*

*վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով»:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի՝

- 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով»:

- 21-րդ հոդվածի համաձայն.

«2. Արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

...

4. Փաստաբանը չի կարող հետապնդվել, պատասխանատվության և բերման ենթարկվել, ձերբակալվել, կալանավորվել կամ ենթարկվել իրավունքների այլ սահմանափակման իր մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ, ներառյալ՝ վարույթն իրականացնող և այլ մարմիններում հայտնաձև կարծիքի կամ դիրքորոշման համար»:

- 22-րդ հոդվածի համաձայն. «Փաստաբանը, նրա ընտանիքի անդամները և նրանց գույքը գտնվում են պետության պաշտպանության ներքո:

Պետական իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել փաստաբանի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված՝ նրան կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ, գույքի ոչնչացմամբ կամ այլ անօրինական գործողություններով»:

Փաստաբանի գործունեության երաշխիքներ են սահմանված նաև ՀՀ քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածով:

***Իրավական նման երաշխիքների սահմանումը կոչված է ապահովելու փաստաբանների անկախությունը՝ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս:***

ՀՀ փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը գտնում է, որ անթույլատրելի է դատախազի նման պահվածքն ընդհանրապես, իսկ փաստաբանի նկատմամբ՝ մասնավորապես, և գտնում է, որ նման արարք դրսևորած դատախազը պետք է պատասխանատվություն կրի:

Հանձնաժողովը գտնում է, որ նման վարքագծով դատախազը խախտում է նաև դատախազի երդումը՝ հեղինակազրկելով դատախազությանը, դատախազի կոչումն ու բարի համբավը:

Ղեկավարվելով «Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության» Կարգի 2.13 և 2.14 կետերով, Հանձնաժողովը

որոշեց հանդես գալ հետևյալ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ.

- ՀՀ փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը խստիվ դատապարտում է դատախազ Կ. Ներսիսյանի վարքագիծը (փաստաբանի նկատմամբ հարձակում, վիրավորում), որը նա թույլ է տվել թիվ ԱՐԴ/0041/01/16 քրեական գործով պաշտպան, փաստաբան Գեորգի Մելիքյանի նկատմամբ և թիվ ԱՐԴ1/0016/01/16 քրեական գործով պաշտպան, փաստաբան Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ:

- Հանձնաժողովը ակնկալում է, որ ՀՀ գլխավոր դատախազությունում և այլ պատկան մարմիններում քննություն կկատարվի և իրավական գնահատական կտրվի դատախազ Կ. Ներսիսյանի արարքներին, ինչպես նաև կքննարկվի որպես դատախազ նրա հետագա գործունեության նպատակահարմարությունը:

ՀՀ փաստաբանների իրավունքների  
պաշտպանության հանձնաժողով